ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրավերի պարզաբանման մասին

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 14-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն**

**Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԷԱՃԱՊՁԲ-2025/7-1-ԵՊԲՀ»**

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի** կարիքների համար **փրկարարական և հակահրդեհային ապրանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ԷԱՃԱՊՁԲ-2025/7-1-ԵՊԲՀ»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **2025 թվականի փետրվարի 13-ին** ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ **2025 թվականի փետրվարի 14-ին** տրամադրված պարզաբանումները.

**Հարցադրում N 1:** Բարև Ձեզ, խնդրում եմ ասեք 37 չափաբաժնի՝ հրշեջ ծորակների մետաղական պահարանների պատրաստման թիթեղի հաստությունը ինչքան պետք է լինի:

**Պարզաբանում N 1:** Թիվ 37 չափաբաժնով սահմանված հրշեջ ծորակների մետաղական պահարանների պատրաստման թիթեղի հաստությունը 0.7-0.8 մմ է:

**Հարցադրում N 2:** Հարգելի գնահատող հանձնաժողով խնդրում եմ տալ պարզաբանում հրավերի 39-րդ և 40-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ. Կրակմարիչ ՕՊ-5 և Կրակմարիչ ՕՍ-2 տեխնիկական բնութագրերում նշված են Ընդհանուր զանգվածների կոնկրետ քաշեր՝ առանց թույլատրելի շեղումների, ինչը պարունակում է պահանջ կամ հղում որևէ կոնկրետ ֆիրմային արտադրանքի, որը բնականաբար հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին: Կրակմարիչի բնութագրում էական պայման է հանդիսանում լիցքավորված նյութի քաշը, իսկ ամբողջական քաշը փոփոխական տեխնիկական պայման է բոլոր արտադրողների համար: Ավելին, բնութագրի բոլոր պայմանների պահպանման դեպքում ընդհանուր քաշի հնարավորինս թեթև լինելն ավելի դյուրակիր է դարձնում կրակմարիչը օգտագործման ժամանակ: Պիտակների մակնշումը հայերենով և ոչ թղթային տարբերակով գործարաններն իրականացնում են հազար հատ և ավել քանակի պատվերների դեպքում: Ընդունելի արդյոք բացի գործարանային պիտակավորումից, հայերենով ջրակայուն թղթե պիտակավորումը: Շնորհակալություն:

**Պարզաբանում N 2:** Թիվ 39 չափաբաժնով սահմանված «Կրակմարիչ ՕՊ-5» ապրանքի լիցքավորվող նյութի քաշը 5 կգ է (շեղումը՝ ± 0.25 կգ), ընդհանուր քաշը՝ 6.4-6.9 կգ, իսկ թիվ 40 չափաբաժնով սահմանված «Կրակմարիչ ՕՍ-2» ապրանքի լիցքավորվող նյութի քաշը՝ 2 կգ (շեղումը՝ ± 0.1 կգ), ընդհանուր քաշը՝ 6.4-6.9 կգ: «Պիտակի նշագրումը» չափորոշիչը բացի գործարանային պիտակավորումից պետք է լինի նաև հայերեն ջրակայուն թղթե պիտակավորումով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող **Պավել Գաբրեյանին:**

Հեռախոս՝ **010 301250 (ներքին համար 250):**

Էլեկտրոնային փոստ՝ **marketing.ysmu20@gmail.com**:

**«ԷԱՃԱՊՁԲ-2025/7-1-ԵՊԲՀ»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով՝

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | (ստորագրությունը) | **Գագիկ Հարությունյան** |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | (ստորագրությունը) | **Հովհաննես Ամիրխանյան** |
| | (ստորագրությունը) | **Սամվել Մարտիրոսյան** |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | (ստորագրությունը) | **Պավել Գաբրեյան** |

ЗАЯВЛЕНИЕ

О РАЗЪЯСНЕНИИ ПРИГЛАШЕНИЯ

**Настоящий текст объявления утвержден решением оценочной комиссии № 2 от 14 февраля 2025 года и публикуется в соответствии со статьей 29 Закона РА «О закупках**

**Код процедуры: «ԷԱԾԱՊՁԲ-2025/7-1-ԵՊԲՀ»**

С целью организации работ **«Фонда Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци»**, комиссия по оценке процедуры закупки под кодом **«ԷԱԾԱՊՁԲ-2025/7-1-ԵՊԲՀ»**, организованный с целью приобретения **спасательных и противопожарных товаров**, ниже представляет запросы, полученные **13 февраля 2025 года** по приглашению с тем же кодом, и разъяснения, предоставленные по этому поводу **14 февраля 2025 года**:

**Запрос N 1:** Здравствуйте, подскажите пожалуйста какой толщины должен быть лист для изготовления металлических шкафов пожарных гидрантов 37-го лота.

**Разъяснение N 1:** Толщина листа для изготовления металлических шкафов пожарных гидрантов, предусмотренных лотом № 37, составляет 0.7-0.8 мм.

**Запрос N 2:** Уважаемая оценочная комиссия, просим уточнить технические характеристики 39-го и 40-го лота приглашения. В технических условиях на огнетушитель ОП-5 и огнетушитель ОУ-2 указаны удельные веса или общие массы без допустимых отклонений, что содержит требование или ссылку на конкретную марку товара, что естественно противоречит требованиям пункта 5 статьи 13 Закона РА «О закупках». Вес заряженного материала является существенным условием в спецификации огнетушителя, а общий вес является переменным техническим условием для всех производителей. Кроме того, максимальное снижение общего веса при сохранении всех технических характеристик делает огнетушитель более портативным при использовании. Фабрики осуществляют маркировку на армянском языке и в небумажном варианте при заказе от тысячи штук и более. Допустимо ли использование маркировки на армянском языке на водонепроницаемой бумаге в дополнение к заводской маркировке? Спасибо.

**Разъяснение N 2:** Масса заправляемого материала товара «Огнетушитель ОП-5», указанный лотом №39, составляет 5 кг (отклонение: ± 0.25 кг), общая масса составляет 6.4-6.9 кг, а масса заправляемого материала товара «Огнетушитель ОУ-2», указанный лотом № 40, составляет 2 кг (отклонение: ± 0.1 кг), общая масса составляет 6.4-6.9 кг. Стандарт «Маркировка этикетки», помимо заводской маркировки, может быть Армянский также с водостойкой бумажной маркировкой.

Для получения дополнительной информации, связанной с этим объявлением, вы можете обратиться к координатору закупок Павлу Габреляну.

Телефонный номер: **010 301250 (250):**

Электронный адрес: **marketing.ysmu20@gmail.com**:

Оценойная комиссия по процедуре закупки под кодом **«ԷԱԾԱՊՁԲ-2025/7-1-ԵՊԲՀ»**

| | | |
|---|---|---|
| **Председатель комиссии:** | ______ (подпись) | **Гагик Арутюнян** |
| **Члены комиссии:** | ______ (подпись) | **Оганес Амирханян** |
| | ______ (подпись) | **Самвел Мартиросян** |
| **Секретарь комиссии:** | ______ (подпись) | **Павел Габрелян** |